



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2014 թվականի N 413 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 1823-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերը անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 1823-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) 1-ին կետում՝

ա. «1247.09» թիվը փոխարինել «1247.21» թվով,

բ. «237.18» թիվը փոխարինել «237.30» թվով.

2) 2-րդ կետի՝

ա. «ա» ենթակետում «1247.09» թիվը փոխարինել «1247.21» թվով,

բ. «բ» ենթակետում «109.9» թիվը փոխարինել «109.78» թվով.

4) 4-րդ հավելվածում

ա. «086-044» կադաստրային ծածկագրով տողից առաջ լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

086-043	0.12								ճաշարան
---------	------	--	--	--	--	--	--	--	---------

բ. «Ընդամենը» տողի «Բնակավայրերի հողեր» սյունակում «237.18» թիվը փոխարինել «237.30» թվով.

3) 5-րդ հավելվածում

ա.

086-043	0.12								դպրոց
---------	------	--	--	--	--	--	--	--	-------

տողը հանել,

բ. «Ընդամենը» տողի «Բնակավայրերի հողեր» սյունակում «9.89» թիվը փոխարինել «9.77» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

2014 թ. ապրիլի 22
Երևան

